ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների («Դատական համակարգ» համակարգչային ծրագրի սպասարկման ծառայություններ) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՄԱԾՁԲ-20/08» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մայիսի 26-ին կնքված N ԴԴ-ՄԱԾՁԲ-20/08 պայմանագրում 2020 թվականի հունիսի 25-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 7.1 կետը լրացվել է հետևյալ պարբերությամբ. «Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը 06.05.2020թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:», պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

26.05.2020թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՄԱԾՁԲ-20/08 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» հունիսի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 26.05.2020թ. կնքված N ԴԴ-ՄԱԾՁԲ-20/08 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. Պայմանագրի 7.1 կետը լրացնել հետևյալ պարբերությամբ. «Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը 06.05.2020թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:»

1.2. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17	Հասցե՝ ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
----------	----------
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1

« 25 » հունիսի 2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
«26» մայիսի 2020 թ. կնքված
N «ԴԴ-ՄԱԾՁԲ-20/08» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/5	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	3 860 000	5 790 000	7 720 000	9 650 000	11 580 000	13 510 000	15 440 000	**15 440 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22
Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ՝ 01555207
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն) Կ.Տ.